

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հոկտեմբեր 22ի Վեհ. Թագաւորի այցելութենէն ետքը (Վեհ. Սեպտ. - Հոկտ.) Գեր. Տ. Սուրէն Եպս. եւ իր հետեւորդները կրկին պատեհութիւնը ունեցան տեսնելու Նորին Վեհափառութիւնը Նոյեմբեր ճին: Նորին Վեհափառութիւնը ի միջի այլոց ըսաւ թէ գործը յանձնած է իր Վարչապետին եւ հրահանգած է անոր որ մեր խնդրին նայի: Համաձայն այս հրահանգին, Վսեմ. Վարչապետը Նոյեմբեր 19ին ընդունեց Գեր. Տ. Սուրէն Սրբազանը եւ իր հետեւորդները Վարչապետարանի մէջ: Սուրէն Սրբազան իր խօսքի ընթացքին ըսաւ թէ ինք փաստացիօրէն կրնայ հաստատել որ Տիրան Արքեպիսկոպոս զրպարտութեան զոհ գացած է եւ խնդրեց որ Կառավարութիւնը վերանկատառման ենթարկէ իր տուած որոշումը: Վարչապետը հարցին վրայ ծանրացաւ երկարօրէն եւ ի վերջոյ աւելցուց. «Տիրան Արքեպիսկոպոսի դէմ մեր տուած որոշումը ի նպաստ եղիշէ Եպիսկոպոսի չէ: Վերջնոյս արգիլուեցաւ Երուսաղէմ երթալը, այս ինքնին փաստ մըն է մեր ըսածին ստուգութեան. դժբախտաբար ինք Յորդանանցի է, այլապէս ան եւս ցարդ արտորած կ'ըլլար. լաւ կ'ըլլայ որ նոր ընտրութեան մը մասին մտածէք եւ կը հաւաստիացնենք Ձեզ թէ Ձեր նոր ընտրութեան արդիւնքը Կառավարութեանս կողմէ ընդհուպ վաւերացման պիտի արժանանայ»: Սուրէն Սրբազան ըսաւ որ մեր եկեղեցական օրինաց համաձայն մինչեւ ընտրուած անձը չի հրաժարի մենք նոր ընտրութիւն չենք կրնար կատարել: Վարչապետը հաստատեց որ ինք չուզեր ըսել որ օրէնքը փոխուի: Ապա Սուրէն Սրբազան փափաքեցաւ լուսաբանուիլ Տիրան Արքեպիսկոպոսի արտոման պատճառներու մասին. Վարչապետը ըսաւ որ այդ Կառավարութեան վերաբերեալ հարց մըն է: Ի վերջոյ Սուրէն Սրբազան խնդրեց որ Վարչապետը միջնորդէ Վեհափառ Թագաւորին մօտ որպէսզի եթէ իսկապէս սխալ մը գործուած է ներուի իրեն եւ Պատրիարքական ճանաչման Ֆէրմանը շնորհուի: Վարչապետը պատասխանեց որ չի կրնար ըսել որ սխալ մը գործուած է, այսուհանդերձ չի կրնար միւս կողմէն՝ Նորին Վեհափառութեան ըսել որ տրուած որոշումը սխալ էր: Ի վերջոյ եզրակացուց. «Եթէ Ձեր օրէնքով նոր ընտրութիւն կատարել անկարելի է այս հարցը եղածին պէս ձգեցէք եւ պատրիարքարանի գործերը Դուք շարունակեցէք վարել, ինչպէս արդէն կ'ընէք»: Այսպէս վերջացաւ 45 վայրկեան տեւող այս խօսակցութիւնը Վարչապետին հետ:

Դեկտեմբեր 1ին, Արքունի Դիւանապետին յանձնուեցաւ նամակ մը յանուն Միաբանութեան որպէսզի ներկայացուի Նորին Վեհափառութիւն թագաւորին: Այդ նամակին մէջ ի միջի այլոց կ'ըսուէր. «Քանի որ Միաբանութիւնը օրինաւորապէս իր պատրիարքն ընտրած էր, կարելի չէր նոր ընտրութիւն կատարել, առանց իր կանոնադրութեան դէմ գործելու: Թէ՛ պատրիարքարանիս ամբողջ պատմութեան ընթացքին չէր պատահած որ իր պատրիարքներէն ուրիշ մէկը մերժուած ըլլար տիրող կառավարութենէն. ուստի ջերմ խնդրանք կ'ըլլար որ դարաւոր անցեալի մը այս փառաւոր աւանդութեան մէջ բացառութիւն չմտնէր, զրպարտութեանց հետեւանքով, եւ անաղարտ մնար պատրիարքարանիս ցարդ վայելած բարի համբաւը, եւ շնորհուէր Տիրան Արքեպիսկոպոսի վերադարձ իր Տունը, եւ Նորին Վեհափառութեան ճանաչման բարձր հրովարտակ»:

Գեր. Տ. Սուրէն Եպս. ստացաւ Նոյեմբեր 29 թուակիր գրութիւն մը որով քաղաքիս Վսեմ. Կառավարիչը կը հրաւիրէր Ս. Ուլտիս Միաբանական Ընդհ. Ժողովի անդամները իր պաշտօնատուն ուր ներքին Գործոց Նախարարն ալ ներկայ պիտի ըլլար: Դեկտեմբեր 2ին 17 Միաբան Հայրեր, Գեր. Տ. Սուրէն Եպս. ի գլխաւորութեամբ ներկայացան Կառավարչատուն տեսակցելու համար ներքին Գործոց Նախարարին եւ Կառավարիչին հետ: Ներքին Գործոց Նախարարը ըսաւ թէ նկատելով որ Տիրան Արքեպս. երկրէն դուրս հանուած է, Կառավարութիւնը կը յանձնարարէ որ նոր ընտրութիւն կատարուի: Կառավարիչը ի միջի այլոց հաւաստիացուց որ Կառավարութիւնը չի միջամտեր Միաբանութեան ներքին վանական եւ կրօնական օրէնքներուն ու գործերուն: Սուրէն

Արբազան պատասխանեց որ զիր մը ունինք Ներքին Գործոց Նախարարին ուղղեալ, որուն մէջ պարզուած է մեր տեսակէտը այս հարցի մասին, եւ փափարեցաւ որ կարգացուի այդ գիրը այս առթիւ: Միաբանութեանս անդամներէն Տ. Դաւիթ Արզ. կարգաց արաբերէն այս գրութիւնը որ ներկայ 17 Միաբան Հայրերէն 15ին կողմէ ստորագրուած էր: Այդ գրութեան մէջ եւս կ'ըսուէր ի միջի այլոց. «Մենք ստորագրեալներս, բացարձակ մեծամասնութիւնը Արբոց Յակոբեանց Միաբանութեան, այսու կը յայտարարենք որ, 1957 Մարտ 20ին, Գերաշնորհ Տ. Տիրան Արքեպիսկոպոսի Պատրիարքական օրինական ընտրութիւնը կատարուած է մեր լիակատար փափարով եւ ազատ կամքով: Այս ընտրութենէն յետոյ շատ մը դիմումներ եղան Նորին Վեհափառութեանը, խնդրելով որ հաճութիւնը ունենայ շնորհելու Տիրան Արբազանի Պատրիարք ընտրութեան ճանաչումը: Այս առթիւ եւս կը խնդրենք Նորին Վսեմութենէն որ հաղորդէ Նորին Վեհափառութեան եւ իր իմաստուն Կառավարութեան որպէսզի մեր օրինական ընտրութեան հաստատում շնորհէ»:

Ընթերցումէն յետոյ գրութիւնը յանձնուեցաւ Ներքին Գործոց Նախարարին որ ըսաւ թէ ինք եւս մեծ համարում ունէր Տիրան Արքեպիսկոպոսի մասին եւ թէ Նախ քան ներկայ պաշտօնին անցնիլը անոր փաստաբանն ալ եղած էր, բայց պաշտօնի գլուխ անցնելէ ետք Տիրան Արքեպիսկոպոսի թղթածրարին մէջ հանդիպած է գրութիւններու որոնք զինք համոզած են որ Տիրան Արբազան օգտակար անձ պիտի չըլլայ երկրին համար: Սուրէն Արբազան աւելցուց որ ինք ձեռքի տակ ունէր փաստաթուղթեր որոնցմով կրնայ ապացուցանել թէ ինչ աղբիւրներէ կուզան ակնարկուած այդ գրութիւնները. եւ ուստի կը խնդրէ որ յանձնախումբ մը կազմուի Կառավարութեան եւ Վանքի ներկայացուցիչներէ, խնդիրը քննելու համար: Արտայայտուեցան նաեւ Միաբաններէն ոմանք եւ ըրին հետեւեալ նկատողութիւնները. Ա) Միաբանութեանս եւ Տիրան Արբազանին չի տրուեցաւ արդար պատեհութիւն մը երեւան հանելու ակնարկուած այդ գրութեանց կեղծ ըլլալը եւ այդու հերքելու ամէն կասկած Կառավարութեան մտքէն: Բ) Կառավարութիւնը հիշդ հիմքի վրայ չի կենար կարծելով որ երկու մրցորդներու միջեւ եղած պայքար մըն է ամբողջ խնդիրը: Երբ Միաբանութիւնը պատրիարք պիտի ընտրէր ընաւ հարց չի կար թէ Տիրան Արբազանը պատրիարք պիտի ընտրուէր թէ Եղիշէ Եպս.ը, ոեւէ մէկը կրնար ընտրուիլ: Գ) Երբ Միաբանութիւնը պատրիարք կ'ընտրէ ոչ միայն նկատի կ'ունենայ նեթակային արժանիքները եւ եկեղեցիին ունենալիք օգտակարութիւնը այլ նաեւ երկրին շահերը. եւ Միաբանութեանս համոզումով Տիրան Արքեպիսկոպոս նաեւ երկրին օգտակար անձ մըն էր: Ներքին Գործոց Նախարարը ըսաւ որ ինք բնականաբար չ'ակնկալէր որ քանի մը օրուան մէջ կատարուի նոր ընտրութիւնը. ամէն պարագային ընտրեցէք ձեր նոր պատրիարքը եւ Կառավարութիւնը շուտով պիտի վաւերացնէ զայն: Սուրէն Արբազան յայտնեց որ Ներքին Գործոց Նախարարին իսկ թելադրանքով Միաբանութեանս կողմէ նամակ գրուած է Վեհափառ Թագաւորին եւ յոյս յայտնեց որ կ'արժանանայ Անոր բարեհաճ նկատառման, խնդրեց միաժամանակ Վսեմ. Նախարարէն որ իրեն յանձնուած այսօրուան գիրին բովանդակութիւնն ալ հաղորդէ Վեհափառ Թագաւորին եւ իր իմաստուն Կառավարութեան: Վսեմաշուք Ներքին Գործոց Նախարարը խոստացաւ կարճ ժամանակէն տալ իրեն ներկայացուած խնդրագրին պատասխանը եւ ժամը 11ին Միաբանութիւնը Վանք վերադարձաւ ինքնաշարժերով:

Գեկտեմբեր 11ին դարձեալ Կառավարչատունէն եկած հրաւերի մը ընդառաջելով Միաբանութիւնս ինքնաշարժերով ներկայացաւ քաղաքիս Կառավարչի պաշտօնատունը, Գեր. Տ. Սուրէն Արբազանի զխաւորութեամբ: Վսեմ. Կառավարիչը հաղորդեց որ հրահանգուած է յայտնելու Միաբանութեան թէ Տիրան Արքեպիսկոպոսի խնդրին կապակցութեամբ Վեհափառ Թագաւորին եւ Ներքին Գործոց Նախարարին ներկայացուած գիրերուն պատասխանը ժխտական էր: Տրուած կացութեան եւ պայմաններուն մէջ Միաբանութեանս համար անակնկալ մը չէր այս պատասխանը, հետեւաբար այդ մասին ոչ մէկ արտայայտութիւն եղաւ եւ սուրճով պատուասիրուելէ վերջ Վանք վերադարձաւ:

Գ Ի Ի Ա Ն Ս. Ա Ր Ո Ո Ռ Յ